



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- սեպտեմբերի 2018 թվականի №---Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №523Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՄԻ ՇԱՐՔ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, հաշվի առնելով՝ «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը և նպատակ ունենալով միավորել Ընկերությանը տրամադրված համարային ռեսուրսները մեկ միասնական թույլտվության մեջ՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 6-ի «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսային ցանցի միջազգային ազդակների հանգույցի կողի, ոչ աշխարհագրական կողերի և համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №523Ա՝
 - 1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը համարների և կողերի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին».
 - 2) որոշման 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«1.Թույլատրել «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը զբաղեցնել համարները և կողերը՝ համաձայն №1 հավելվածի:

2. Հաստատել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված համարների և կողերի զբաղեցման պայմաններ՝ համաձայն №2 հավելվածի»:

3) որոշման հավելվածը ուժը կորցրած ճանաչել.

4) որոշումը լրացնել նոր №1, №2 հավելվածներով՝ համաձայն համապատասխանաբար №1 և № 2 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2016 թվականի փետրվարի 17-ի «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կողերի և համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №23Ա որոշումը,

2) 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը հատուկ ծառայության կողի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №425Ա որոշումը,

3) 2017 թվականի փետրվարի 13-ի «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը հատուկ ծառայության կողի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №30Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի դեկտեմբերի 10-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ